ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

30.01.2019թ.
գ. Գետաշեն

Գետաշեն համայնքի ղեկավարի 2018 թվականի տարեկան կատարած աշխատանքների վերաբերյալ

Գետաշեն համայնքի 2018թ. բյուջեն ըստ եկամտատեսակների կատարվել է հետևյալ կերպ՝

ա/ հողի հարկ 10686,5 հազար դրամի դիմաց 3192.3 հազար դրամ կամ 29.9 % ,

բ/ գույքահարկ 6150.0 հազար դրամի դիմաց 5855.7 հազար դրամ կամ 95.2 %,

գ/ վարձակալական վճարներ 2660,2 հազար դրամի դիմաց 3391,0 հազար դրամ կամ 127.4%,

դ/ տեղական տուրքեր՝ ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքի թույլտվություններ 64.0 հազար դրամի դիմաց 85.3 հազար դրամ կամ 133.3 %,

ե/ պետության կողմից դոտացիա 34927,3 հազար դրամի դիմաց 34927,3 հազար դրամ կամ 100.0%

զ/ համայնքում մատուցվող ծառայությունների դիմաց՝ խմելու ջուր, աղբահանություն 1980.0 հազար դրամի դիմաց 205.8 հազար դրամ կամ 10.4%:

Ծախսային մասը կատարվել է հետևյալ կերպ՝

ա/ 2018 թվականի ընթացքում աշխատավարձը և եկամտային հարկը հաշվարկվել և վճարվել է ամբողջությամբ, պարտքեր չեն գոյացել,

բ/ Տրամադրվել է 1650.0 հազար դրամ սոց. օգնություն, որից 850,0 հազար դրամը այն ընտանիքներին, որտեղ մահ է գրանցվել:

գ/ Խմելու ջրի ցանցի և պոմպերի վերանորոգման համար ծախսվել է 950.0 հազար դրամ, Բնակչությանը մատակարարած խմելու ջրի պոմպերի ծախսած էլ. էներգիայի գումարը՝ 7216.8 հազար դրամ, ամբողջությամբ փոխանցվել է համայնքի բյուջեից:

2018թ. շաբաթական մեկ անգամ համայքնում կատարվել է աղբահանություն, որի համար համայնքի բյուջեից ծախսվել է 1560.0 հազար դրամ:

Հաճախակի կազմակերպել է սոց. կուլտ. միջոցառումներ՝ Մարտի 8-ի, Ապրիլի 24-ի, Մայիսի 9-ի, Հունիսի 1-ի, Սեպտեմբերի 1-ի, Ուսուցիչների օրվա, Ամանորի և մի շարք այլ միջոցառումներ:

2018թ. ընթացքում ընդլայնվել է համայնքի գազաֆիկացման ցանցը՝ կատարվել է գազի մատակարարման մագիստրալ խողովակների կառուցում, բարեկարգվել է գերեզմանոցի տարածքը և 5կմ փողոցային լուսավորություն է անցկացվել :

Գյուղապետ Գ. Հովհաննիսյանի կողմից համայնքի բնակիչներին տեղեկացվեց համայնքի սոցիալ տնտեսական զարգացման և կատարվելիք այլ նախագծերի մասին:

2018 թվականին համայնքի բնակիչներից ստացվել է՝ 40 դիմում, որոնք քննարկվել են և տրվել են համապատասխան լուծումներ և պատասխաններ: 2018 թվականին համայնքը ստացել է՝224 պաշտոնական գրություն, որոնց պատշաճ կերպով և ժամկետներում տրվել են 165 պատասխաններ: Անցկացվել է ավագանու 12 նիստ, կայացվել է 48 որոշում: Արձանագրվել է համայքնի ղեկավարի 28 կարգադրություն, կայացվել է համայնքի ղեկավարի 25 որոշում:

Առողջապահության բնագավառում կատարվել են հետևյալ աշխատանքները:

Գետաշենի բուժ ամբուլատորիայում գրանցված բնակչության թիվը կազմում է 2556 մարդ, 2018 թվականին բուժամբուլատորիա հաճախումների թիվը կազմել է 4319՝ որից 1204-ը երեխաների հաճախումներն են: Գրանցվել է 314 տնային կանչեր, պրոֆիլակտիկ նպատակներով ապասարկվել է 915 մարդ: Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվել է կանխարգելիչ միջոցառումներ՝ բնակչության արյան մեջ շաքարի քանակի ստուգում 252 մարդ՝ 35-68 տարեկան, և 30-60 տարեկան 66 կնոջ կանխարգելիչ հետազոտություն: Ակնաբուժների կողմից կատարվել է 44 հետազոտություն, որից 10 մարդ ստացել է ամբուլատոր բուժում և խորհրդատվություն, 5 մարդ վիրահատվել են անճար՝ պետ. պատվերով: Բացի այս ամենից Գետաշենի բուժամբուլատորիայում գործում է ընտանեկան բժշկություն, որը մշտապես գտնվում է համայնքի ղեկավարի անմիջական հսկողության ներքո: Բուժ անձնակազմի և գյուղապետի անմիջական մասնակցությամբ հսկողություն է սահմանվել խմելու ջրի վթարների, խորքային հորերի քլորացման և կենցաղային աղբի հեռացման հարցերում:

Համայնքի ղեկավարը նշեց, որ համայնքում առկա հիմնախնդիրները հնարավոր է լուծել միայն սեփական եկամուտների հավաքագրմամբ, որի վրա խիստ ուշադրություն է դարձնելու և լինելու է հետևողական:

Համայնքում առկա հիմնախնդիրներն են՝

1/ Մանկապարտեզի վերագործարկում:

2/ Խիստ անհրաժեշտ է հիմնովին վերանորոգել խմելու ջրի ներքին ցանցը՝ որի 1965 թ. է շահագործվել և գտնվում է անմխիթար վիճակում:

3/ Մշակույթի տան հիմնանորոգում:

4/ Համայնքի ընդհանուր գազաֆիկացում:

Գետաշեն համայնքի ղեկավար՝ Գագիկ Հովհաննիսյան